Հավելված N 5
ՀՀ կառավարության 2021 թվականի
հոկտեմբերի 14-ի N 1681 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ՈՉՆՉԱՑՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՁԵՎԱԿԵՐՊՎՈՂ ԱՊՐԱՆՔԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ՎԱՅՐԻ ԵՎ ԵՂԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Եզրակացություն ստանալու համար հայտարարատուն լիազոր մարմին է ներկայացնում գրավոր դիմում, որը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝

1) իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, պետական գրանցման համարը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, հաշվառման համարը, ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև դիմումատուի գրանցման և գործունեության իրականացման վայրերի հասցեները.

2) ապրանքի անվանումը.

3) արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին (ԱՏԳ ԱԱ) համապատասխան ապրանքի ծածկագիրը.

4) ապրանքի քանակը, ծավալը.

5) ապրանքի նկարագիրը (ագրեգատային վիճակ, բաղադրություն, փաթեթավորում, այլ բնութագրիչներ).

6) ապրանքի վտանգավոր հատկությունները (թունավոր, հրդեհավտանգ, պայթյունավտանգ, կոռոզիոն ակտիվ).

7) ապրանքի՝ «Ոչնչացում» մաքսային ընթացակարգով հայտարարագրման համար հիմք ծառայած պատճառը:

2. Դիմումատուն եզրակացություն ստանալու համար անհրաժեշտ տեղեկություններն ու փաստաթղթերը կարող է ներկայացնել լիազոր մարմին առձեռն կամ փոստով կամ էլեկտրոնային եղանակով:

3. Սույն կարգի 1-ին կետով պահանջվող տեղեկությունները թերի ներկայացված լինելու կամ վրիպակների կամ անճշտությունների առկայության դեպքում լիազոր մարմինը 3 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին փոստով կամ էլեկտրոնային եղանակով գրավոր տեղեկացնում է դիմումատուին: Դիմումատուն կարող է 3 աշխատանքային օրվա ընթացքում շտկել փաստաթղթերում առկա թերությունները և լրամշակված փաստաթղթերը ներկայացնել լիազոր մարմին: Փաստաթղթերում թերությունների բացակայության դեպքում լիազոր մարմինը 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է եզրակացություն՝ ապրանքների ոչնչացման հնարավորության, վայրի և եղանակի վերաբերյալ, իսկ հանրապետությունում այդ ապրանքների անվտանգ եղանակով ոչնչացման համապատասխան վայրի և իրականացնող կազմակերպության բացակայության դեպքում՝ ապրանքների ոչնչացում իրականացնելու անհնարինության վերաբերյալ՝ նշելով պատճառը:

4. Եզրակացությունը կարող է տրվել թղթային կամ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով:

5. Եզրակացության տրամադրումը մերժվում է հետևյալ հիմքերի առկայության դեպքում՝

1) չեն ներկայացվել պահանջվող փաստաթղթերը.

2) ներկայացված փաստաթղթերում առկա թերությունները նշված ժամկետում չեն շտկվել, կամ դրանցում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14.10.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ